



ԵՂՂՇՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏԻՐ ՎՐԱՍՏԱՆ



րաց Եկեղեցին արևելյան քրիստոնեության հնագույն եկեղեցիներից մեկն է: Ըստ վրաց պատմական աղբյուրների, Վրաստանում քրիստոնեության քարոզությունը և պետական կրոն հռչակվելը կապված է Ս. Նունե կույսի անվան և քարոզության հետ:

Գ դարում Ս. Նունե կույսի առաքելությամբ և քարոզությամբ, քրիստոնեական կրոնի լույսը ծագեց նաև վրացական հողի վրա:

Գ դարի սկզբին, երբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ, Տրդատ Գ-ի օրով, Վրաստանում նույնպես կային քրիստոնեական դադուների համայնքներ: Մինչև այդ պատմական մեծ եղելությունը, ինչպես ասուտ կերպով մեզ վկայում են հայոց և վրաց աղբյուրները, Հայաստանում գործում էին, Ս. Հովհաննիսյանց և Ս. Գայանյանց անունով, 70 քրիստոնեա կույսեր, որոնցից 37-ը հայոց Տրդատ Գ թագավորի հրամանով մարտիրոսության պսակ ընդունեցին, իսկ մնացածները ցրվեցին հարևան երկրներ քրիստոնեություն քարոզելու նպատակով: Վերջինների մեջ էր Ս. Նունե կույսը, որը Վարդապատից անցավ Վրաստան և քարոզեց, ապա նահատակվեց և կոչվեց իրավամբ Վրաստանի լուսավորիչ:

Հայաստանում քրիստոնեություն մուտքն ու պետական կրոն հռչակվելը, այլ խոսքով «Հայոց դարձ»-ի պատմությունը մեզ ավանդել է Ազաթանգեղոսը իր պատմության մեջ: «Վրաց դարձ»-ի պատմությունն էլ մեզ է հասել վրացերեն «Մոքցեայ Քարթլիսայ» կամ «Քարթլիս Մոքցեայ» կոչված երկու տարբերակներով: Վրաց դարձի պատմության ա-

ռաջին տարբերակը՝ «Շատրերդի վարիանս» խմբագրված է 973—976 թվականներին Շատրերդ վանքում, իսկ երկրորդը՝ Ճեղեղի վարիանսը՝ համանուն վանքի ձեռագրում ավելի ուշ քրջանում<sup>1</sup>:

«Վրաց դարձ»-ի պատմության երկրորդ տարբերակը հատկապես խոսում է Ս. Նունե կույսի վարքի և քարոզության մասին:

«Այն օրվանից (Կոստանդիանոս կայսեր պարտվելուց, 310 թ.) տասներորդ տարին գնաց Հեղինե [կայսրուհին] նրուաղեմ [Քրիստոսը] պատվական խաչը փնտռելու, և տասնչորսերորդ թվականին մի ինչ-որ պատճառով փախուստի դիմեց արթունի կանանցից մեկը՝ անուանով Հովհաննիս, իր դայակով հանդերձ: Եվ նրա հետ գտնվում էր ոմն գեղեցիկ գերուհի, անունով Նունե (Նինո), որի գործունեությունը հետազոտել էր Հեղինե թագուհին և էր նա (Նունեն) իշխանուհի Հոռմից, որը ինքն էր սկսել իր ճանապարհորդությունը՝ բուժելով [հիվանդներին] և հասել Հունաստան. նա (ինքը) ռուսացանում էր իր իշխանուհի Հովհաննիսին:

Անցնելով ծովով՝ Հովհաննիս, Գայանե, Նունե և նրանց ուղեկիցները մտան Հայքի (Սոմխիթի) սահմանները [Տրդատ] թագավորի բնակատեղը և բոլորը՝ մարտիրոսացան այնտեղ: Մնաց միայն Նունեն, որն ուղևորվեց հյուսիսային լեռների ուղղությամբ:

Նունեն Տրդատի հալածանքների ժամանակ մնում է Վարդանիսի փշերի մեջ... և շորորդ ամսին անցա [Ջավախեթի] լեռների կողմը, որպեսզի տեղեկանամ, թե ո՞ր է Սցխեթյան...»:

<sup>1</sup> Տե՛ս այս մասին պրոֆ. դոկտ. Լ. Մելիքսեթ-բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», I հատ., Երևան, 1934 թ., էջ 18:

Ս. Նունն կույսի քարոզութեան կենտրոնն էր վրացական մայրաքաղաք Մցխեթան, որտեղ հին «աստվածներն էին տիրապետում և թագավորներն էին իշխում»։ Ս. Նունն կույսը հաստատվելով թագավորանիստ Մցխեթայում, քարոզում և բժշկություններ է կատարում։ Վրաստանում իր առաքելութեան առաջին շրջանում նա բժշկում է վրացական ամենաազդեցիկ բոճեշխներից մեկի՝ Մցխեթայի Միհրան իշխանի կնոջը, որով իր վրա է հրավիրվում այդ ազդեցիկ բոճեշխ ուշադրութունը և հետաքրքրութունը։

Ահա թե ինչ է գրում վրացական աղբյուրը պատմական այդ եղելության մասին.

«Կին ոմն, անուն Նունէ, յընկերաց Սրբոց Հոհիսիմեանցն ի ցրուելոցն, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց ի Մցխիթա, ի նոցա քաղաքն նախագահ, յոյժ ճգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան, որով և բազում ախտաժէտս բժշկեալ, և գլխովին զկին Միհրանայ առաջնորդին վրաց...»

«Եսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս յղեաց առ Ս. Գրիգոր, երէ զինչ հրամայեցէ նմա գործել այնուհետև (ընդգծումը մերն է— Ն. Վ.)։ Քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն Աւտարանին։ Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռնս, որպէս ինքն արար և կանգնել զպատուական նշան խաչին մինչև ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա»։

Քրիստոնեական գաղափարների վերջնական հաղթանակից հետո, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Վրաստանի և Աղվանից աշխարհի համար, որպես հովիվ ուղարկում է Պահլավունիների տոհմից պատանի ամեծանձն՝ Գրիգորիսին<sup>2</sup>։

«Բանզի հնգետասանամեօք ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն զմանուկն Գրիգորիոս Վրաց և Աղուանից աշխարհին (ընդգծումը մերն է— Ն. Վ.) և կրթեալ լուսաւորէր զերկոսին զաշխարհսն և հաստատէր քրիստոնէական հաւատովն զնալ, շինէր և եկեղեցիս ըստ կարգաց և քաղաքաց և ձեռնադրէր զերիցունս, յորդորէր ի պաշտօն սրբութեան և յիշատակ սրբոց կանխել հանապազ»<sup>3</sup>։

Այսպես ուրեմն, Վրաստանը պաշտոնապես և պետականորեն լուսավորվեց քրիստոնեական ճշմարիտ լույսով Ս. Նունն կույսի ջանքերով և քարոզութեամբ։

2 Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Վեներտի, Գիրք Բ, գլ. 22, էջ 334—316։

3 Մովսես Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860 թ., գիրք Ա, գլ. ԺԴ, էջ 29։

Այդ երջանիկ օրերից սկսվում է Հայ և Վրաց եկեղեցիների սերտ համագործակցությունը, որը շարունակվում է մինչև Կյուրիոն Կաթողիկոսի օրերը, 608 թվականին երբ «Կյուրիոն վրաց կաթողիկոսը, թեև Հայոց Հայրապետանոցին մեջ սնած ու հասունացած, Հայոց Աթոռն բաժնվելու գաղափարը ունեցավ... Վրաց եկեղեցին, Կյուրիոնի գլխավորությամբ, քաղկեդոնական դավանության աշակերտեցավ և հունական եկեղեցվույն խառնվեցավ»<sup>4</sup>։

Մինչ այդ երկու եկեղեցիների միջև հաստատվել էին սերտ համագործակցություն և սիրալիր բարեկամական հարաբերություններ։ Վրացիք աստվածաբանական հարցերում միասին էին Հայ եկեղեցու հետ, մասնակցում էին միջ-եկեղեցական բարեկարգչական ժողովների՝ որպես մի և նույն Ընդհանրական, Առաքելական եկեղեցու անդամներ։ Վրաց կաթողիկոսները ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսից։

Վրաց ժողովրդի համար Ս. Էջմիածինը նույնքան նվիրական և սրբազան էր, որքան Մցխեթայի իրենց Կաթողիկոսանիստ Մայր եկեղեցին։ Ամեն տարի երկուստեք (հայոց և վրաց կողմից) ուխտագնացություններ էին տեղի ունենում Ս. Էջմիածին և Մցխեթայի կաթողիկոսանիստ Մայր եկեղեցին։ Այսպիսով երկու հարևան եկեղեցիների և ժողովուրդների միջև հաստատվել էր սերտ բարեկամություն և միասնություն։

Ոչ միայն այսքան։ Երկու ինքնուրույն ջուր եկեղեցիների բարեկամությունը այնքան սերտ է եղել և այնքան խորը, որ 506 թվականին, երբ հայոց Բարսեբն կաթողիկոսը եկեղեցական ժողով է գումարում Դվինում նզովելու համար Լևոնի տոմարը, Հայոց Հայրապետի կողքին հավասար դիրքով նստած էլ լինում նաև Համայն Վրաց Գաբրիել կաթողիկոսը իր 23 արքեպիսկոպոսներով և եպիսկոպոսներով։ Այս բոլորը գալիս են լավագույն կերպով հաստատելու, որ երկու դրացի ժողովուրդները եկեղեցական խնդիրներում էլ չի բանս հաւատոյ, յաւանդութիւնս ուղղափառ եկեղեցւոյ ի միութեանն էին։

Հայ և Վրաց եկեղեցիների այս մտերիմ բարեկամությունը շարունակվեց մինչև 608 թվականը, երբ Վրացական եկեղեցու գահի վրա բարձրանում է Կյուրիոն Կաթողիկոսը, որը Դվինի հայոց Մայր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից էր և շատ լավ գիտեր հայոց լեզուն ու հայոց պատմությունը։ Այս նույն հայրապետի ժամանակ քաղ-

4 Օրմանյան, «Հայոց եկեղեցի», 1911 թ., էջ 633։

կեդոնական ազդեցութիւնը ուժեղանում է Վրաստանում և Վրաց Եկեղեցին քաղկեդոնականութիւն ընդունելով միանում է Հուլյն Օրթոդոքս Եկեղեցուն, բայց որպէս Եկեղեցի կառավարվում է իր ներքին օրենքներով, պահելով իր վարչական-կազմակերպչական ինքնուրույնութիւնը:

Վրաց ժողովրդի և Վրաց Եկեղեցու գըլխով անցնում են դարերի փոթորիկները: Վրաց Եկեղեցին էլ հավասար չափով և հերոսութեամբ բաժանում է իր ժողովրդի վըշտերն ու սակավ ուրախութիւնները: Վրաց լեզուն ու գրականութիւնը, մշակույթն ու արվեստները զարգանում են Վրացական Եկեղեցու հովանու տակ: Վրաց Եկեղեցին նախախնամական դեր է կատարում վրաց ժողովրդի կյանքում: Այսպէս անցնում են դարերը:

Մինչև ԺԴ—ԺԵ դարերը Վրացական Եկեղեցին պաշտոնապէս ոճներ կեկեղեցական մի Գլուխ և Աթոռ, որը կառավարում էր Վրաց Եկեղեցուն: Սակայն երբ Վրաստանում սկըսվեց մասնատվել և քայքայվել քաղաքական կենտրոնաձիգ իշխանութիւնը, այդ իսկ պատճառով մասնատվեց նաև Վրաց Եկեղեցին: Ստեղծվեցին երկու Աթոռներ, որոնցից մեկը՝ Քարթլիի կամ Մցխեթայի Աթոռը՝ Մցխեթայում, իսկ մյուսը՝ Ափխազ-Իմերեթիայի Աթոռը՝ Պիցունդա-Պիցմիդայում, Սև ծովի ափին, ներկա Գազրի քաղաքի և Գաղաութայի միջև:

Կազմակերպչական տեսակետից Վրաստանում հաշվվում էին 13 Եկեղեցական մեծ թեմեր: Այս վիճակը շարունակվում է մինչև 1801 թվականը, երբ Վրաստանն անցավ ռուսական տիրապետության տակ և Վրաց Աղալին Եկեղեցին այլևս առանձին գոյության նշանակութիւնը կորսնցուց<sup>5</sup>:

1811 թվականին վերացվեցին վրացական ղույզ Կաթողիկոսական Աթոռները և ստեղծվեց Ռուսական Պրավոսլավ Եկեղեցու Միտոդի անմիջական հսկողութեան տակ Վրաց Եկեղեցու էկզարխութիւն: Էկզարխը միաժամանակ համարվում էր Միտոդի մշտական անդամ և Քարթլիի և Կախեթի արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ: 1811 թվականից հետո Վրաց Եկեղեցու առաջին արքեպիսկոպոսը Նդել է Ախթալայի արքեպիսկոպոս Վաղամբ: Այդ օրերին Վրաստանը բաժանված էր Եկեղեցական հինգ մեծ թեմերի, այն է՝ Վրաստանի, Իմերեթիայի, Սուխումիի, Գուրես-Մենդրիլիայի և Վլադիկովկասի:

1917 թվականի մարտի 12-ին (25-ին) վերականգնվեց Վրացական Եկեղեցու ինքնա-

գրիտութիւնը (ավտոկեֆալութիւնը) և Վրաց Եկեղեցու գլուխ հռչակվեց Համայն Վրաց Կաթողիկոսը, որը միաժամանակ Մցխեթա-Քրիլիսիի Սպիսկոպոսապետն է, աթոռանիստ ունենալով Քրիլիսի մայրաքաղաքը: Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Սերգեյը 1943 թվականին պաշտոնապէս ճանաչեց Վրաց Եկեղեցու ինքնագլխութիւնը:

Վրացական Եկեղեցու ինքնագլխութիւնը վերականգնվելուց հետո, Վրաց Եկեղեցու կաթողիկոս-պատրիարքներ են եղել Կյուրիոս Կ-ը (1917—1918 թ. թ.), Կոնսիդ Ա (1918—1921 թ. թ.), Ամբրոսի Ա (1921—1927 թ. թ.), Քրիստաֆոր Բ (1927—1932 թ. թ.), Կալիստորատ Ա (1932—1952 թ. թ.) և Մելքիսեդեկ Գ (1952 թվականից):

Աշխարհի մեծ Փրկչի Ավետարանի լույսը հայ և վրաց ժողովուրդները գրեթէ միասին ընդունեցին, մեկ սրբազան ավազանի մեջ մկրտվելով և 300 տարի միասին ապրեցին ու գործեցին Հայ և Վրաց Եկեղեցիները, որից հետո, քաղաքական և պատմական հարկադրանքների տակ, Վրաց Եկեղեցին հեռացավ իր 300 տարվա որդեգրած դավանաբանական սկզբունքներից՝ տարբեր ձևով հասկանալով ու բացատրելով Քրիստոսի երկու բնութեանց վարդապետութիւնը:

Հակառակ այն փաստի, որ երկու Եկեղեցիների միջև տարակրծութիւններ ծագեցին դավանաբանական խնդիրների շուրջ, այնուամենայնիվ երկու հարևան ժողովուրդներն էլ մնացին բարեկամներ, լավ հարեւաններ, այն ճշմարիտ ավանդութեան հիման վրա, թէ վրացիներն ու հայերը երկու արյունակից եղբայրների՝ Հայոսի և Քարթլոսի որդիներն են: Այս մտիկութիւնը անշահախնդիր կերպով մեր արյունոտ բայց հերոսական պատմութեան մեջ արձանագրվել է Ս. Վարդանանց անմահ հերոսամարտից մինչև Դավիթ-բեկ ու մինչև Հայրենական Մեծ պատերազմը, երբ երկու եղբայր ժողովուրդների հերոսածին զավակները ուսուսի տված իրենց կլանքը զոհեցին՝ պաշտպանելով Կովկասն ու մեր Մեծ Հայրենիքը: Եկեղեցական ասպարեզում նույնպէս բարեկամութիւնը և համագործակցութիւնը Հայ և Վրաց Եկեղեցիների միջև դարավոր է եղել և եթէ պատահել են շրջաններ, երբ սառնութիւն է տիրել երկու քույր Եկեղեցիների հարաբերութեան միջև, այդ ոչ թէ տիրող կարծիք ու պահանջ է եղել, այլ հանգամանքների ստիպում: Բարեկամութեան և համագործակցութեան լավագույն փաստ է 1950 թվականին Քրիլիսիում գումարված երեք քույր Եկեղեցիների՝ Ռուսական, Վրացական և Հայկական Եկեղեցիների ժողովը:

<sup>5</sup> Օրմանյան, «Հայոց Եկեղեցի», էջ 63:

Այդ ժողովում երեք քույր Եկեղեցիների Պետևերը հանդես եկան միակամ և միասիրտ հանուն խաղաղության պաշտպանության: Պատմական այդ ժողովն ավարտվելուց հետո, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի սրտագին հրավերով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավերջ կենտրոն Ս. Էջմիածին ուխտի եկան Ռուսական և Վրացական Եկեղեցիների Պետերը իրենց շքամբերով, որպես հյուրերը Ամենայն Հայոց Հայրապետի, մի սրտագին էջև ավելացնելով Հայ, Վրաց և Ռուս Եկեղեցիների դարավոր բարեկամության պատմության վրա:

Ահա ինչ է ասում այս դարավոր բարեկամության մասին երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետը Իր բարի գալստյան խոսքի մեջ, խոսված Մայր Տաճարում 1950 թվականին երկու քույր Եկեղեցիների Պետերի Ս. Էջմիածին Մայր Տաճարում հանդիպման ժամանակ.

«Վերջին տասնամյակների ընթացքում սերտացել և խորացել է նաև մեր Եկեղեցու բարեկամությունը դրացի և բախտակից Վրաց Եկեղեցու հետ: Բնականաբար հարց է՝ ի՞նչպես հասկանալ, ի՞նչպես բացատրել այս երևույթը:

Ցարական Ռուսաստանը մի սարսափելի դաքահանություն ուներ— Ռուսաստանում ապրող ժողովուրդներին կովեցնել միմյանց հետ, որպեսզի ինքը ապահով զդա: Նա զբժտություն էր սերմանում նաև քրիստոնյա Եկեղեցիների միջև<sup>6</sup>:

Անխախտ բարեկամության լավագույն պայցույցը եղավ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի սրտագին հրավերը՝ ուղղված Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն Ա Հայրապետին այցելելու Վրաստան, էլ ավելի խորացնելու և ջերմացնելու համար Հայ և Վրաց Եկեղեցիների հարաբերությունները:

Ամենայն Հայոց Հայրապետի պատմական այս այցելությանմբ ավելի ևս ամրապնդվեց ու ծաղկեց այն հազարամյա բարեկամությունը, որն արդեն իսկ գոյություն ունի երկու ժողովուրդների և երկու քույր Եկեղեցիների միջև:

Ազոթենք առ Աստված, որ անսասան մ՛նա հայ և վրաց ժողովուրդների և Եկեղեցիների միջև գոյություն ունեցող դարավոր ճշմարիտ ու անկեղծ եղբայրությունն ի Քրիստոս:

6 «Էջմիածին», 1950 թ., հուլիս-օգոստոս, էջ 15:

